

ասիկայ գրողը ճամորդ մը կրճենայ, ու քաղաքները տեսած աղէկ բաները գովելով, ու գէշ բաները վար դարնելով կրպատմէ:

7. Ասոնցմէ 'ի զատ տասնըհինգ հատ ուրիշ կածէթթաներ ալ կրտպվին, որ ուսումնական ու հոգևոր նոր բաները կրպատմեն: Աորս հատ ալ ուրիշ լեզուաւ կրտպվին, քի բօյէմերէն մաճառերէն, հոռմեռէն, ու սերվիաներէն:

8. Անուններու գիրքը (Շէմալի'յէօ) իրեք տեսակ են, ու ամէն տարի նորէն կրտպվին: Առաջինը կայսեր ցեղին, երևելի պաշտօնատէրներուն, ու մեծ իշխաններուն ունեցած պատիժները, պաշտօնները, անունները, մականունները, պատուանունները, ու բնակութիւնն կըգրէ: Արկորդը զինւորական պաշտօնատէրներու վրայ կըգրէ: Ու երրորդը վաճառականներու, խանութ ունեցողներու, ու արհեստաւորներու վրայ կըգրէ: Այս ուրիշ ասանկ գիրք մ'ալ եկեղեցականներու, որ ան ալ իրեք տարին մէյմը կրտպվի:

ԳՒՍԻՍ Լ:

Բարե-ագրի ու ճամբորդի սուրհանդակները:

1. Քաղաքը մասնաւոր տեղ մը կայ, որ բարևագիր կամ զանազան նամակներ խրկել ուղօ-

ղը հոն կըտանի, ու ուր որ դրած էնէ կըխրկեն: Ղրսէն եկածներն ալ հոն կուքան, ու հոնտեղը մասնաւոր ծառայներ կան, որ ամէն ծակը ծուկը գիտեն, անոնցմով քաղքին մէջը բաժնել կուտան:

Տէրութէ դուրս երթալու ողջունագրերու համար պէտք է, որ խրկողն ալ՝ ու որուն որ կըխրկըվին նէ ան ալ վճարէ, տէրութէ մէջ մնացողներու համար խրկողը բան չլվճարեր:

Մէկ պարզ ողջունագրի համար, որ մէկ մղոնէ ինչվան վեց մղոն տեղէն եկած է՝ երկու արծաթ քռայձառ կըտրվի՝ ինչվան տասվերկու մղոն չորս քռայձառ, ինչվան տասներութր մղոն վեց քռայձառ, ինչվան երեսունուվեց մղոն ու անկէ աւելին ալ տասներչորս արծաթ քռայձառ կըվճարվի: Պարզ թուղթը երկուք ու կէս տրամ է, թէ որ աւելի կըլլայ նէ՝ վճարքն ալ աւելի կըլլայ:

2. Տեսակ մը կայսերական կառքեր կան, որ պղտիկ կապոցներ, ստակներ, ոսկի, արծաթ, մարգրիտ, ու սուղ բաներ կըտանին կըբերեն, ու կորսըվին նէ՝ տէրութիւնը վնասը կըվճարէ, անոր համար ասանկ բաներ խրկել ուղողը, պէտք է որ աս բանիս պաշտօնատարին թղթի կամ արկղի մէջ դրած բաց տանի, որ տեսնէ. ետքը կայսերական կնքով ու տիրոջը կնքովը կըկնքէ, ու տանողին ձեռքը գիր մը կուտայ, որ կորսըվի նէ անով կարենայ պահանջել:

Ես կառքերով ճամբորդ ալ կըտանին. ամէն

մէկ փօստային՝ որ երկու մղոն է, երեսունըվեց արծաթ քռայձառ կրվճարվի, ու ճամբորդը քսան-ւերկու հօսա բան ալ հետը կրնայ առնուլ, անկէ աւելի որ կրլայ նէ՝ պէտք է զատ վճարել: Ասի-կայ գիշեր ցորեկ կերթայ, ու կէս մէնզիլ է:

3. Տէրութիւն հիմայ ուրիշ տեսակ կառք մըն ալ հանեց, որ ան ալ գիշեր ցորեկ կերթայ, ու օրը տասուերկու փօստա ճամբայ կառնու, որ քառսունը-ութը ժամ կընէ: Սարդու համար վճարքը քիչ մը աւելի է, բայց վերինին եօթը օրւան ճամբան իրեք օրվան մէջ կերթայ, ու ոսկի արծաթ չհտանիր:

4. Ի՞նչ որ մէկը ուղած ատենը երթալ՝ ուղած ատենը կենալ, ու մեծութիւն ծախել կուզէ նէ՝ իր կառքովը ու փօստայի ձիերով կերթայ, որ մէկըղ-մէկէ հասարակօրէն երկու երկու մղոն հեռու բո-լոր Աւրոպա ամէն ճամբաներուն վրայ կան: Առջի փօստային կամ իջլանին (մէնզիլհանէին) ձիերը վազ-ցընելով կը քաշեն ինչւան երկրորդը, հոն հասա-ծինպէս առջի ձիերը կը հանեն, ու նոր ձիեր կըլը-ծեն: Ուղած իջլանին մէջը ուղածին չափ կը կենայ, ու երթալ կուզենէ, անմիջապէս կը ծեն կը քաշեն: Արկու ձիուն մէկ փօստի համար մէկ Փիօրին երե-սունըվեց արծաթ քռայձառ կրվճարի, ու ձի վա-րողին քսանըչորս արծաթ քռայձառ պարգև կը-տըրվի թէ որ կառքն ալ փօստային կամ իջլանին է նէ՝ քսանը չորս արծաթ քռայձառ ալ անոր հա-մար կրվճարվի: